«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ

---

6 հուլիսի, 2023 թ. N 19 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.1.2 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակման պահից։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2023 թ. հուլիսի 6-ի N 19 - Լ որոշման

(փոփոխություն 23.02.2024թ N 7-Լ, 25.12.2024թ N 40-Լ)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՈՐԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ 3
2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նպատակները 3
3. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի գործառույթները 4
4. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգը 6
5. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերը 7
6. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները 8
7 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները 9
8 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի քարտուղարի իրավունքներն ու պարտականությունները 9
9 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը 10
10 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը 11

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն կանոնադրությունը մշակվել է՝ ի կատարումն «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.1.2 կետերի պահանջների:

1.2 Սույն կանոնադրությամբ սահմանվում են Պալատի որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի (այսուհետ՝ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով կամ Հանձնաժողով) կարգավիճակը, նպատակներն ու գործառույթները, ինչպես նաև ձևավորման ու գործունեության կարգը:

1.3 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը Պալատի մշտական հիմունքներով գործող հատուկ մարմին է:

1.4 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Աուդիտորական գործունեության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքներով, «Աուդիտորական գործունեության մասին» օրենքով սահմանված՝ աուդիտորական գործունեության միջազգային ստանդարտներով, պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջներով, Պալատի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և Պալատի համապատասխան այլ ներքին իրավական ակտերով:

1.5 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով», կրճատ անվանումը՝ «ՀԱՊ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողով»:

1.6 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը հաշվետու է Պալատի խորհրդին:

1.7 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը կարող է ունենալ իր անվանմամբ հայերենով, ռուսերենով և անգլերենով ձևաթղթեր և/կամ անհատականացման այլ միջոցներ:

1.8 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքով:

2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նպատակները

2.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նպատակներն են.

2.1.1 Պալատի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ապահովումը.

2.1.2 Պալատի անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահներին և աուդիտորական կազմակերպություններում չաշխատող աուդիտորներին ՀՀ օրենսդրությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման ապահովումը.

2.1.3 արտաքին գնահատման արդյունքներով բացահայտված խախտումների վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրությունը, Պալատի խորհրդին հիշյալ ուսումնասիրությունների արդյունքներից բխող համապատասխան կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

2.1.4 Պալատի անդամների նկատմամբ էթիկայի պահանջների պահպանման նկատմամբ պրոֆեսիոնալ հաշվապահների մասնագիտական էթիկայի կանոնագրքի պահանջներից և գործարար վարվելակերպի կանոններից բխող տարբեր ներգործության միջոցներով հսկողության իրականացումը.

2.1.5 Հանրային վերահսկողության խորհրդին աջակցության տրամադրումը «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքով սահմանված աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման ընթացակարգերը մշակելու/լրամշակելու գործընթացում:

3. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի գործառույթները

3.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները.

3.1.1 ապահովում է Պալատի անդամ հանդիսացող աուդիտորական կազմակերպությունների և աուդիտորների կողմից մատուցվող աուդիտորական ծառայությունների որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման գործընթացը՝ համաձայն սույն կանոնադրության 2.1.5 կետում նշված արտաքին գնահատման ընթացակարգերի.

3.1.2 ապահովում է Պալատի անդամ հանդիսացող փորձագետ հաշվապահներին և աուդիտորական կազմակերպություններում չաշխատող աուդիտորներին ներկայացվող պահանջների պահպանման արտաքին գնահատման գործընթացը՝ համաձայն «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին»

օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում նշված արտաքին գնահատման ընթացակարգերի.

3.1.3 քննարկում և հաստատում է սույն կանոնադրության 3.1.1 և 3.1.2 կետերի համաձայն իրականացված որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման հաշվետվությունները.

3.1.4 սույն կանոնադրության 3.1.1 և 3.1.2 կետերում նշված արտաքին գնահատման ուսումնասիրության արդյունքների ամփոփմամբ կազմված և սույն կանոնադրության 3.1.3 կետով սահմանված կարգով քննարկված ու հաստատված հաշվետվությունների հիման վրա Պալատի խորհրդին ներկայացնում է Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկություն.

3.1.5 մշակում և Պալատի խորհրդի հաստատմանն է ներկայացնում Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի տարեկան ծրագիրը, որը ներառում է սույն կանոնադրության 3.1.1 և 3.1.2 կետերում նշված արտաքին գնահատման աշխատանքների տարեկան ժամանակացույցը.

3.1.6 քննում է Պալատի անդամների կողմից մատուցվող հաշվապահական և աուդիտորական ծառայությունների շրջանակներում և դրանց հետ կապված այնպիսի գործողությունների (անգործության) վերաբերյալ ստացված բողոքներ, որոնք կապված չեն սույն կանոնադրության 3.1.1 և 3.1.2 կետերով սահմանված արտաքին գնահատման առարկա հանդիսացող գործունեության հետ.

3.1.7 սույն կանոնադրության 3.1.6 կետով սահմանված բողոքների քննության արդյունքներով Պալատի անդամների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Պալատի խորհրդին.

3.1.8 Պալատի խորհրդին ներկայացնում է առաջարկություններ՝ կապված Պալատի Անդամակցության հանձնաժողովի կողմից իրականացրած՝ Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների շարունակական մասնագիտական զարգացմանը վերաբերող հաշվետվությունների ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքների դիտարկման հիման վրա Պալատի անդամ աուդիտորների և փորձագետ հաշվապահների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ.

3.1.9 գործնական կապեր է հաստատում և, իր գործառույթների մասով, համագործակցում է պետական մարմինների, ինչպես նաև օտարերկրյա համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ.

3.1.10 իրականացնում է Պալատի կանոնադրությամբ և Պալատի ներքին իրավական այլ ակտերով նախատեսված համապատասխան գործառույթներ:

4. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կազմավորման կարգը

4.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամ կարող են լինել Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները:

4.1.1 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը ձևավորվում է Պալատի խորհրդի յուրաքանչյուր ընտրման պահից եռամսյա ժամկետում: Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները շարունակում են գործել մինչև Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահը: *(փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում N 21-Լ)*

4.2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը բաղկացած է ինն անդամից: *(փոփոխված 25.12.2024թ. խորհրդի որոշում N 40-Լ)*

4.3. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահը նշանակվում են Պալատի խորհրդի կողմից: (*փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում N 21-Լ)*

4.4. Պալատի խորհրդի կողմից նշանակվում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահը:

4.5. Պալատի աշխատակազմն էլեկտրոնային փոստի և (կամ) Պալատի պաշտոնական կայքի միջոցով հայտարարություն է տարածում Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամների թեկնածուների ներգրավման վերաբերյալ:

4.6. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել հաշվապահական հաշվառման կամ աուդիտորական գործունեության հետ կապված առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը:

4.7. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահն ուսումնասիրում է Պալատի աշխատակազմի կողմից իրեն ներկայացված Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կազմում ներգրավվելու հետաքրքրություն ունեցող թեկնածուների ցանկը և ընտրում անհրաժեշտ թվով անդամների:

4.8. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ Պալատի խորհուրդը նշանակում է անհրաժեշտ թվով Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամներին: Խորհուրդը, Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամներ ընտրելիս, հաշվի է առնում թեկնածուների մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները:

4.9. Այն դեպքում, երբ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի որևէ անդամի պաշտոնավարումը վաղաժամկետ դադարում է, ապա սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նոր անդամ՝ նախորդ անդամի լիազորությունների մնացած ժամանակահատվածի համար։ *(փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում N 21-Լ)*

5. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերը

5.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է դռնփակ նիստեր գումարելու միջոցով:

5.2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ անհրաժեշտության՝ որակի պահանջների պահպանման արտաքին գնահատման տարեկան ծրագիրը և որակի պահանջների պահպանման յուրաքանչյուր արտաքին գնահատման հաշվետվության քննարկման և հաստատման, ինչպես նաև Պալատի խորհրդին Պալատի անդամների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ առաջարկությունների ներկայացման համար:

5.3. Նիստերը հրավիրվում են Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի կողմից և կարող են անցկացվել ֆիզիկապես համատեղ հավաքի ձևով կամ հեռավար եղանակով՝ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ:

5.4. Նիստերի արդյունքներն արձանագրվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի որոշմամբ կարող են նաև ձայնագրվել կամ տեսաձայնագրվել: Արձանագրությունում նշվում են.

ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
բ) նիստին ներկա անձինք.
գ) նիստի օրակարգը.
դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
ե) նիստում ընդունված որոշումները:

5.5. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովում քվորումն առկա է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

5.6. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը որոշումները ընդունում է հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում

Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է։

6. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

6.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

6.1.1 մասնակցել Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերում ընդունվող որոշումների քվեարկությանը.

6.1.2 ներկայացնել հարցեր Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերում քննարկելու համար.

6.1.3 արտահայտել տեսակետ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

6.1.4 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն Պալատի այլ մարմիններից և աշխատակիցներից։

6.2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամները պարտավոր են.

6.2.1 մասնակցել Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերին: Եթե Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամը որևէ պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին, պետք է այդ մասին նախապես տեղեկացնի Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի քարտուղարին.

6.2.2 սահմանված ժամկետներում իրականացնել իրենց հանձնարարված աշխատանքները,

6.2.3 խստորեն պահպանել քննարկվող հարցերի և ի պաշտոնե ստացված փաստաթղթերի գաղտնիությունը:

6.3. Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները ժամանակավորապես կատարելու անհնարինության դեպքում իրեն փոխարինում է Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկված Հանձնաժողովի անդամը:

6.4. Եթե Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամն անհարգելի պատճառներով բացակայում է անընդմեջ երեքից ավելի նիստերից կամ մեկ տարվա ընթացքում անցկացված նիստերի ընդհանուր թվի կեսից ավելիին, ապա Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել դիմել Պալատի

խորհրդին՝ Հանձնաժողովի տվյալ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և Հանձնաժողովի նոր անդամ նշանակելու հարցով:

7 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները

7.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահը:

7.2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահը՝

7.2.1 կազմակերպում և ղեկավարում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի ընթացիկ աշխատանքը.

7.2.2 բաշխում է պարտականությունները Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամների միջև և նրանց տալիս է հանձնարարականներ.

7.2.3 որոշում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստի օրակարգը, անցկացման ձևը, ամսաթիվը, ժամանակը և վայրը.

7.2.4 հրավիրում և անցկացնում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք.

7.2.5 ստորագրում է որակի հսկողության պահանջների պահպանման արտաքին գնահատման արդյունքների հիման վրա պատրաստված և Պալատի խորհրդին ուղղվող եզրակացությունը.

7.2.6 Պալատի խորհրդին զեկուցում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի տարեկան ծրագրի և տարեկան գործունեության մասին հաշվետվության վերաբերյալ.

7.2.7 որոշումներ է կայացնում փորձագետ ներգրավելու վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության:

8 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի քարտուղարի իրավունքներն ու պարտականությունները

8.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի ձևավորումից հետո հրավիրված առաջին նիստում Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը Հանձնաժողովի անդամներից ընտրում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի քարտուղար:

8.2. Ի լրումն Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անդամների համար սույն կանոնադրությամբ սահմանված իրավունքների և պարտականությունների, Հանձնաժողովի քարտուղարը՝

8.2.1 մասնակցում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախապատրաստման, գումարման և անցկացման աշխատանքներին.

8.2.2 ապահովում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նիստերի արձանագրությունների կազմումը, ինչպես նաև այդ արձանագրությունների, իսկ սույն կանոնադրությամբ սահմանված դեպքերում՝ նաև ձայնագրությունների կամ տեսաձայնագրությունների պահպանումը և Պալատի գործադիր մարմին հանձնումը.

8.2.3 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի հետ միասին ստորագրում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի արձանագրությունները.

8.2.4 ստորագրում է Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի անունից արտաքին գնահատման աշխատանքների իրականացման նպատակով Պալատի անդամ աուդիտորական կազմակերպություններին, աուդիտորներին, փորձագետ հաշվապահներին, Պալատի այլ մարմիններին և այլ անձանց ուղարկվող փաստաթղթերը.

8.2.5 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կատարում է այլ գործառույթներ և գործողություններ:

9 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը

9.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը կազմում է իր գործունեության տարեկան ծրագիրը, ինչպես նաև տվյալ տարվա ընթացքում արտաքին գնահատման ենթակա աուդիտորական կազմակերպությունների ցանկը և արտաքին գնահատում իրականացնելու տարեկան ժամանակացույցը ներկայացնում է Պալատի խորհրդի հաստատմանը ոչ ուշ, քան տվյալ տարվան նախորդող տարվա նոյեմբերի 15-ը, իսկ նոր կազմավորված հանձնաժողովը՝ կազմավորումից հետո երկամսյա ժամկետում:

9.2. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Պալատի խորհրդին է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը:

9.3. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Պալատի խորհուրդը:

10 Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը

10.1. Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովին նյութատեխնիկական ապահովումը և անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է Պալատի խորհրդի որոշմամբ՝ Որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի կողմից կազմված և Պալատի խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի և դրա իրականացման նպատակով նախատեսված նախահաշիվ-ների համաձայն: